

որպէսզի,—եթէ լուրը ճիշտ է,—ձեզանից կախուած միջոցներն գործ դնէք կաթողիկոսի ճանապարհորդութիւնը խաբանելու, որ չէ համապատասխանում նրա տարիքին և կառավարութեան տեսակէտով էլ բոլորովին աւելորդ է:

Բացի դրանից՝ անօգուտ չեմ համարում սրա հետ ուղարկել ի հայեցողութիւն ձեր մի քանի քաղաքներ այն տեղեկութիւններին, որոնք ստացուած են իմ իրաւասութեան ներքոյ գտնուած նախարարութիւնում կաթողիկոսի վերաբերութեամբ և խոնարհարար խնդրում եմ հաղորդել ինձ թէ որքան ճշմարիտ են այդ տեղեկութիւնները:

Խնդրում եմ նոյնպէս հաղորդել ինձ ձեր կարծիքը Ջալալեան Սարգիս եպիսկոպոսի մասին, որի համար, տուում են, թէ Ներսէսի սիրելին է, և շատ վատ յատկութիւնների տէր\*»:

ՉԽԻ

Ներքին գործերի մինիստրի այս կրկին գրութիւններին և հարցմունքներին ի պատասխան՝ կովկասեան փոխարքան նոյն 1856-ի յուլիսի 16-ին №635 հետեւելը գրեց կոմս Օալովին,—ժանգարմանի կօրպուսի չէֆին.

«Մրա հետ միասին կովկասեան կօմիտեոն ներկայացնում եմ այն գործը որ էջմիածնի Հայոց Ներսէս կաթողիկոսին է վերաբերում, որի գործողութիւնները հայ եկեղեցւոյ կառավարութեան նկատմամբ՝ չեն կարող արգարանալ:

Չեմ կարող ձեր պայծառափայլութիւնից թագցնել որ իմ քառասնամեայ սէրը, ծանօթութիւնը Ներսէսին, և դէպի նրա արժանաւորութիւններն տածածս յարգանքըն է պատճառը, որ իմ այս պարտականութիւնը կատարում եմ հակառակ իմ հոգապան թելադրանքին:

Սակայն այժմ պատկառելի հայրապետը, իր ծերութեան պատճառաւ, այնպիսի դրութեան է հասել, որ այլևս անկարող է իրեն յանձնուած բարդ գործը կառավարել, որ գնալով հեռզհեռէ առաւել պիտի խանգարուի:

Մրա համար էլ հարկադրուած եղայ ներկայացնել ի բարեհայեցողութիւն թագաւոր կայսեր այն միակ միջոցը, որ, իմ կարծիքով, կարող է հայ եկեղեցւում վերականգնեցնել օրինական կարգ ու կանոնը:

Հաւանութիւն կը գտնի՞ արդեօք իմ կարծիքը թէ ոչ, չգիտեմ: Յամենայն դէպս իմ պարտքն եմ համարում խնդրել ձեր պայծառափայլութիւնից, որ այս գործը քննելիս ի նկատի առնուին Ներսիսի նախկին ծառայութիւնները, որոնցմով նա իրաւունք ունի կառավարութեան ուշադրութեանը, անկախ այն անկանոնութիւններից, որ նա թոյլ է տուել վերջին ժամանակում\*\*»:

Նղիշէ ա. քահ. Դեղամեանց

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ի Թ Ի Ի Ն

Աստրախան, 16 ապրիլի.

Հայկական տառերի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400 ամեայ յօրելեանները կատարելու և այդ առթիւ դպրոցական Քօնդ հիմնելու միտքը պատկանում է հայ ժողովրդին, որոնց մասին շատ շատ բաներ գրուեցին հայ պարբերական թերթերում, սակայն գործը նախաձեռնող հանդիսացաւ մեր ս. էջմիածինը, որի վեհապետի կողմից հրահանգներ ուղարկուեցան Ռուսաստանի հայ թեմերը յօրելեանի առթիւ հանգանակութիւն բանալ յօգուտ դպրոցական Քօնդի: Աստրախանի թեմի առաջնորդը ևս ստանալով այդպիսի հրահանգ, ժողովրդի մասնակցութեամբ ընտրուած անձանց միջոցով ձեռնարկել է արդէն գործի:

Անկախ սրանից Աստրախանի ինտելիգենտ հայ հասարակութիւնը պատրաստուում էր արդէն ներկայ տարուայ Չատկի առաջին կիրակի օրը տօնելու հանդիսաւոր կերպով համազգային այդ մեծ յօրելեանների տօնը, որի առիթով նախաձեռնութեամբ գրական գեղարուեստական ընկերութեան նախագահ պ. Ռոմ. Աստուածատրեանի եղան միքանի անգամ ժողովներ, նոյն տօնական հանգէանները առաւել շքեղութեամբ և ժողովրդական լայն մասնակցութեամբ կատարելու համար: Մինչ այս վիճակի մէջ էր գործը, յանկարծ թիֆլիզից եկող դերասանական խումբը պատճառ դարձաւ տօնակատարութեան յետաձգելուն: Արէլեան դերասանական խումբն էր քաղաքս այցելողը:

Վաղուց է, որ Աստրախան դերասանական խումբ չէր եկել. վաղուց է, որ հայկական ներկայացումներ չէր տեսել տեղիս հասարակութիւնը և այդ պատճառով էլ իւրաքանչիւր ներկայացման ժամանակ թատրոնի դահլիճը լիքն էին լինում երկսեռ այցելուներով:

Պէտք է ասած Արէլեան դերասանական խումբը վատ չէր կազմակերպուած և իրենց մի շարք ներկայացումներով մեծ ցնցում առաջացրին հասարակութեան մէջ: Ամենից շատ հետաքրքրականը Ծանթի «Հին աստուածներ» դրամայի ներկայացումն էր. եթէ չափազանցութիւն չէ ասածս, այդ օրը ներկայ էր Աստրախանի գրեթէ ամբողջ հայութիւնը, չթուենք խեղճ քահանաներին, որոնք իրաւունք չունէին ներկայ լինելու: Ծատ գովելի յատկութիւն ունի Աստրախանի հայութիւնը, նա սիրում է հայ ներկայացումներ տեսնել, նա չի խնայել և խնայում իր կողմէկները այդ նպատակի համար: «Հին աստուածները» ներկայացնելիս դերասանական խումբը վարդապետական տարազով և վեղարով էր խաղում բեմի վրայ. վեղարները խորամանկ դերասան արուեստագէտը ցուցադրել էր բեմի վրայ ժողովրդի մէջ միայն էֆէկտ առաջացնելու նպատակով, մթթէ առանց վեղարների չէր կարելի, թէև համոզուած եմ, որ այն էֆէկտը չէր ունենայ, ինչ որ ունեցաւ:

Առաջին անգամ այսպիսի բարդ պատկերաւոր բան

\*) АЕТЫ, հատ. XI № 19.

\*\*\*) АЕТЫ, հատ. XI, № 20.

ներկայացնելիս, խաղի թերի պակասաւոր կողմերը ընդհանրապէս ուշադիր զննողի աչքերից հեշտ են վրիպում: Ես այդ դերի մէջն էի գտնուում, ուստի և որեէ կարծիք յայտնելի Ընդհանուր առմամբ խաղը էֆեկտաւոր և տպաւորիչ էր: Ի վերջոյ հայ դերասանական խումբը, հասարակութեան կողմից վարձատրուած առանձին ընծաներով, պատիւներով, մեծ բաւականութեամբ հեռացաւ Ասարախանից այս ասլիլի ամսուայ սկզբներին, շարունակելով իրենց միասիան ուրիշ հայաբնակ քաղաքներում:

Ա. Ս.

### ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

#### Յովն. Թումանեանի «Գառնիկ ախպեր»:

Յով. Թումանեանի «Գառնիկ ախպերը» ես պիտի բնագատութեան ենթարկեմ բոլորովին այլ կերպ, առանց խօսք բաց անելու՝ նրա գեղարուեստական արժանիքների ու խոշոր թերութիւնների մասին:

Բանն այն է որ Թումանեանը՝ իր այս գրուածքը հրատարակ է հանել, որպէս ինքնուրոյն հեղինակութիւն՝ այն ինչ՝ «Գառնիկ ախպերը» ոչ այլ ինչ է, բայց թէ տեղ-տեղ ազատ փոխադրութիւն և ուրիշ տեղ էլ ստորկական թարգմանութիւն՝ ուստական ժողովրդական մի հէքեաթից, որ կրում է «Сестрица Аленушка и братец Иванушка» վերաառութիւնը: Թումանեանը՝ հէքեաթի ուլիկը դարձրել է գառնիկ, հորթը—կով, ծիուկը—ծի, Аленушка-ն-Մանուշ, Иванушка-ն-Մանուկ և այլն, և այլն...

Առհասարակ պէտք է նկատել, որ Յով. Թումանեանը վերջին տարիներս՝ իր բնաւորութեան մէջ երեւում է հանում մի շատ տգեղ և անհամակրելի գիծ. նա՝ օրինակ՝ վեր է առնում-այս կամ այն անյայտ հեղինակի որեէ երկը, ենթարկում նրան միանգամայն չնչին և ոչ էական փոփոխութիւնների և ապա հրատարակում՝ որպէս սեփական ստեղծագործութեան արգասիք:

Բայց այդ դեռ մի կնիւթ թողնենք. խօսենք «Գառնիկ-Ախպերի» մասին, որ սկսում է այսպէս.—

—«Ծրկու որքեր, քուր ու ախպէր, կորած գրնում են հեռո՞ւ, արեւ վա՞ռ, ճանապարհն երկար, ոչ աղբիր կայ եւ ոչ առու...»

Այժմ կարդանք ուսերէնը.—

— Идутъ двое сиротоѣ сестрица Аленушка съ братцемъ Иванушкой, по дальнему пути. по широкому полю, а жаръ-то, жаръ ихъ донимаетъ.

Թումանեանը աւելացնում է,

— Հոյրը մեծ էր, ոնց որ լինէր՝ կը դիմանար արեւին, իսկ ախպէրը փոքրիկ էր դեռ—չէր դիմանում ծարաւին—

Եւ այնուհետեւ սկսում է դարձնել բազմապէս կերպով թարգմանել.—

—Գրնո՞ւմ են գնում, տեսնում են ճանապին կովի ոտնատեղ՝ մէջը լիքը ջուր:

—«Բ ուլիկ ջան, քուրիկ, ես շատ եմ ծարաւ, ի՞նչ կըլի թողնես խմեմ մի պունուր»:

—«Զէ՛, ախպէր ջան, չէ՛, դու կով կը դառնաս կովի կնդակի տեղից մի խմի: Մի քիչ էլ կացի, քիչ էլ որ կենաս մտիկ մի գուլալ աղբիր կայ հիմի»:

Ռուսերէն այսպէս է ասուած.—

— Шли, шли, шли... Солнце высоко, захотелось Иванушке пить. «Сестрица Аленушка и пить хочу». Подажди братецъ, дойдемъ до колодца. Колодецъ далеко, а жаръ донимаетъ, потъ выступаетъ. Идутъ и видятъ прудъ а около пруда пасется стадо жоровъ. «Я хочу пить», Говорить Иванушка. Не пей, братецъ, а то будешь теленочкомъ. Онъ послушался и пошли они дальше.

— Գնում են, գնում, տեսնում են ճանապին ծիու ոտնատեղ. մէջը լիքը ջուր:

—«Բ ուրիկ ջան, քուրիկ, ես շատ եմ ծարաւ, ի՞նչ կըլի թողնես խմեմ մի պունուր»:

Զէ, ախպէր ջան, չէ՛, դու ծի կը դառնաս, ծիու սմբակի տեղից մի խմի...

Шли, шли, и видятъ рѣку, а около ходитъ табунъ лошадей. «Ахъ, сестрица, если-бы ты знала, какъ мнѣ пить хочется». Не пей, братецъ, а то будешь жеребеночкомъ».

Գնում են, գնում, տեսնում են ճանապին գառան ոտնատեղ, մէջը լիքը ջուր, փոքրիկ ախպէրը էլ չի համբերում, քրոջից թաքուն խմում է պունուր:

Шли, шли, и видятъ озеро, а около него гуляетъ стадо овецъ «Ахъ, сестрица, мнѣ пить хочется». «Не пей, братецъ а то будешь баранчикомъ».

Այստեղ Յով. Թումանեանը էլ չի համբերում և իր Մանուկին ստիպում է ջուր խմել՝ ու... գառնիկ (баранчикъ) դառնալ: Բայց ուսերէն հեքեաթի մէջ դեռ պատմում է, թէ ինչպէս քոյրը նախազգուշացնում է եղբորը նաև խոզիկ եւ ուլիկ դառնալուց: Վերջին անգամ նա այլեւ չի համբերում և քրոջից թաքուն խմելով—ուլիկ է դառնում:

Онъ не вытерпѣлъ и не послушался сестры, напился и сталъ козленочком, прибѣжалъ и прыгаетъ передъ Аленушкой, и кричитъ: мекеке, мекеке.

Յով. Թումանեանը այսպէս է գարձրել այդ մասը:

— Հոյրը մին էլ ետ է նայում (մոռացել է ըստ սովորութեան կրկնել)՝—ետ է նայում ու տեսնում, Ս. Յ.), որ մի գառ մղկտալի, իր ետեւից տըխուր մայում ու մայելով վազ է տալի.—«Ախ, իմ Մանուկ որք ու անտէր իմ անլեզու Գառնիկ Ախպէր էլ ոնց անեմ, ի՞նչ անեմ ես... կանչում է խեղճ